

Նոր գրքեր Հայաստանի ազգային գրադարանում

Դեկտեմբերի 12-ին, ժամը 13:00-ին Հայաստանում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների կենտրոնը մոտ 100 անուն գիրք կնվիրաբերի Հայաստանի ազգային գրադարանին, որոնք ստացվել են ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հետ գրքերի փոխանակման ծրագրի շրջանակում: Գրականությունը հիմնականում վերաբերում է քաղաքական գործընթացներին՝ ընտրություններին, անցումային արդարադատությանը, ժողովրդավարական կառավարմանը և առաջնորդությանը, ինչպես նաև Մերձավոր Արևելքում քաղաքական իրավիճակի հարցերին: Անգլերեն լեզվով գրքերը կօգնեն Հայաստանի հետազոտողներին ավելի համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրել նշված թեմաները: ԱՄՆ դեսպանությունը ԱՄՆ Կոնգրեսի գրքերի փոխանակման ծրագրի միջոցով աջակցություն է ցուցաբերում հայաստանյան բազմաթիվ գրադարանների: Գրականության ցուցահանդեսը գործելու է Ազգային գրադարանի Թամանյանական մասնաշենքում: Այն ընթերցողների համար բաց է շաբաթվա բոլոր օրերին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա կլինեն Հայաստանում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանը, ԱՄՆ դեսպանության մամլո կցորդ Քելլի Լոնգը, ինչպես նաև ԱՄՆ պետքարտուղարության տեղեկատվական ռեսուրսների մասնագետ Աննա Ջոնսոնը: